ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 Հունիսի 2017 թվականի N 14

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 19-ի թիվ 04 արտահերթ նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.Գևորգյան Կարինե	.....	.....	.....
2.Եղիազարյան Զավեն	.....	.....	.....
3.Հարությունյան Կարեն	.....	.....	.....
4.Մկրտչյան Նորայր	.....	.....	.....
5.Սարիբեկյան Գոռ	.....	.....	.....
6.Սարիբեկյան Մարտիկ	.....	.....	.....
7.Տեր-Գեղամյան Գեղամ	.....	.....	.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ

ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19_Ի 04 ԱՐՏԱՀԵՐԹ

ՆԻՍՏԻ 14 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի 04 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի ԹԻՎ 04 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

/ԶԵԿ.՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ /

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ.՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ /

3. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ.՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ /

4. ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ.՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ /

ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունիսի 2017թվականի N 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով ,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետը և համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Տալ համաձայնեցում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի 2017 թվականի հողային հաշվեկշռին՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին /Ա. Եղիազարյանին/ հողային հաշվեկշիռը սահմանված կարգով համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Արմավիրի ստորաբաժանման հետ:
3. Համայնքի ղեկավար /Ա.Եղիազարյանին/՝ հողային հաշվեկշիռը մինչև 2017 թվականի հուլիսի 10-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.Գևորգյան Կարինե	.....	.....	.....
2.Եղիազարյան Զավեն	.....	.....	.....
3.Հարությունյան Կարեն	.....	.....	.....
4.Մկրտչյան Նորայր	.....	.....	.....
5.Սարիբեկյան Գոռ	.....	.....	.....

6.Սարիբեկյան Մարտիկ ....

7.Տեր-Գեղամյան Գեղամ ....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Չև 22ա

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ոռոգվող հողերի առկայության և բաշխման
(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների)

Մարզը՝ Արմավիր (անվանումը) — 4.00 (Կոդ)

Համայնքը՝ գ. Բամբակաշատ (անվանումը) — 255.0 (Կոդ)

(հեկտարներով)

NN	Նպատակային նշանակություն	Հողատեսք, գործառնական նշանակության	Կոդի NN	Ընդամենը ոռոգվող հողեր (2+3+4+8+12)	Սեփականության սուբյեկտ: ՀՀ քաղաքացիների	ՀՀ իրավաբանական անձանց	Հայաստանի Հանրապետություն՝ համայնքային	պետական	Օտար պետություն՝ ի, կազմ-ի և ՀՀ-ում կաց-ն ցմի հանդամ
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	12
1.1	1. Գյուղատնտեսական նշանակության	վարելահող		396.67	339.54		56.22		0.91
1.2		բազմ.տնտարկներ., ընդամենը		213.97	205.85		8.12		
1.2.1		այդ թվում՝ պտղատու այգի		65.62	65.62				
1.2.2		խաղողի այգի		148.35	140.23		8.12		
1.2.3		այլ							
1.3		խոտհարք							
1.4		արոտ							
1.5		այլ հողատեսքեր							
1		Ընդամենը (1.1+1.2+1.3+1.4+1.5)		610.64	545.39		64.34		0.91
2.1	2. Բնակավայրերի	բնակելի կառուցապատման		227.0	227.0				
2.1.1		այդ թվում՝ տնամերձ հողեր		227.0	227.0				
2.1.2		այգեգործական /ամառանոցային/							
2.2		ընդհանուր օգտագործման							
2.3		այլ հողեր							
2		Ընդամենը (2.1+2.2+2.3)		227.0	227.0				
3		3. Արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ.							
4		4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների							
5		5. Հատուկ պահպանվող տարածքների							
6		6.Հատուկ նշանակության							
7.1	7. Անտառային	անտառ							
7.2		թփուտ							
7.3		վարելահող							
7.4		խոտհարք							
7.5		արոտ							
7.6		այլ հողեր							
7		Ընդամենը							
8		8. Ջրային							
9		9. Պահուստային							
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+8+9)				837.64	772.39		64.34		0.91

Կատարող

Համայնքի ղեկավար՝

(ստորագրություն, կնիք)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հողային ֆոնդի առկայության և բաշխման

Ձև 22

մարզ՝ Արմավիր (անվանումը) 4 (Կոդ)

համայնքը՝ գ. Բամբակաշատ (անվանումը) 255 (Կոդ)

(հեկտարներով)

NN	Նպատակային նշանակություն	Հողատեսք, գործառնական նշանակության	Կոդի NN վեր	Ընդամենը (2+3+4+8+12)	Սեփականության սուբյեկտ: Սեփական հողամասերի վաճառքից ստացված գումար	<< քաղաքացիների	<< իրավաբանական անձանց	համայնքային: Ընդամենը (5+6+7)	տրված գործակալությունների	տրված գործակալությունների	չտրված գործակալությունների	պետական: Ընդամենը (9+10+11)	տրված	տրված	գործակալությունների	Սեփական միջոցներ << բնակիչների
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահող		396.67	339.54		56.22		20.31	35.91					0.91
1.2		բազմ.տնտարկներ., ընդամենը		213.97	205.85		8.12		7.54	0.58					
1.2.1		այդ թվում՝ պտղատու այգի		65.62	65.62										
1.2.2		խախողի այգի		148.35	140.23		8.12		7.54	0.58					
1.2.3		այլ բազմամյա													
1.3		խոտհարք													
1.4		արոտ													
1.5		այլ հողատեսքեր		47.67			47.67		0.48	47.19					
1		Ընդամենը		658.31	545.39		112.01		28.33	83.68					0.91
2.1	2. Բնակավայրերի	բնակելի		246.87	246.81										0.06
2.1.1		այդ թվում՝ տնամերձ		246.87	246.87										
2.1.2		այգեգործական													
2.2		հասարակական		2.82	0.18		1.63			1.63	1.01			1.01	
2.3		խառը													
2.4		ընդհանուր		35.84			35.84			35.84					
2.5		այլ հողեր		3.86			3.86			3.86					
2		Ընդամենը		289.39	246.99		41.33			41.33	1.01			1.01	0.06
3.1	3. Արդյունաբ., ընդերքօգտագործ.	արդյունաբերական													
3.2		գյուղատնտեսական		8.85	0.83		8.02			8.02					
3.3		պահեստարանների		1.64		1.64									
3.4		ընդերք օգտագործ.													
3		Ընդամենը		10.49	0.83	1.64	8.02			8.02					
4.1	4. Էներգետիկայի, կապի, տրանսպորտի	էներգետիկայի													
4.2		կապի													
4.3		տրանսպորտի		5.12							5.12			5.12	
4.4		կոմունալ		0.17			0.17			0.17					
4		Ընդամենը		5.29			0.17			0.17	5.12			5.12	
5.1	5. Հատուկ պահպանվող տարածքների	բնապահպանական													
5.1.1		այդ թվում՝ արգելոց.													
5.1.2		արգելավայրեր													
5.1.3		ազգային պարկ													
5.2		առողջարարական													
5.3		հանգստի													
5.4		պատմ. և մշակութ.		6.33			5.56			5.56	0.77			0.77	
5		Ընդամենը		6.33			5.56			5.56	0.77			0.77	
6	6. Հատուկ նշանակության	Ընդամենը													
7.1	7. Անտառային	անտառ													
7.2		թփուտ													
7.3		վարելահող													
7.4		խոտհարք													
7.5		արոտ													
7.6		այլ հողեր													
8.1	8. Ջրային	գետեր													
8.2		ջրանցքներ													
8.3		լճեր													
8.4		ջրանցքներ		6.03			0.52			0.52	5.51			5.51	
8.5		հիդրոտեխ. և այլ ջր.													
8		Ընդամենը		6.03			0.52			0.52	5.51			5.51	
9.1	9. Պահուստ	աղուտներ													
9.2		ավազուտներ													
9.3		ճահիճներ													
9.4															
9.5		այլ անօգտագ. հողեր													
9		Ընդամենը													
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+8+9)				975.84	793.21	1.64	167.61		28.33	139.28	12.41			12.41	0.97

Համայնքի ղեկավար _____ (ստորագրություն, կնիք)

Կատարող՝ _____ (ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունիսի 2017թվականի N 16

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Բամբակաշատի համայնքապետի ներկայացրած հանձնաժողովի անհատական կազմը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը համաձայն հավելվածի:
2. Սահմանվում է, նաև հանձնաժողովի նախագահը, ով իր հերթին հանձնաժողովի կազմից նշանակում է հանձնաժողովի նախագահի տեղակալ և քարտուղար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.Գևորգյան Կարինե	.....	.....	.....
2.Եղիազարյան Զավեն	.....	.....	.....
3.Հարությունյան Կարեն	.....	.....	.....
4.Մկրտչյան Նորայր	.....	.....	.....
5.Սարիբեկյան Գոռ	.....	.....	.....

6.Սարիբեկյան Մարտիկ ....

7.Տեր-Գեղամյան Գեղամ ....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի ԹԻՎ 04

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ 16 ՈՐՈՇՄԱՆ

ԿԱԶՄ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Համայնքապետ՝ հանձնաժողովի նախագահ	Ա. Եղիազարյան
ՀԾ՝ հանձնաժողովի նախագահի տեղակալ	Ռ. Ավետիսյան
Մանկավարժ՝- անդամ	Ջ. Այվազյան
Բուժաշխատող՝- անդամ	Ն. Ավետիսյան
ՀԾ՝-անդամ	Ա. Մուսաելյան
Աշխ. Քարտուղար՝ քարտուղար	Ս. Մարտիրոսյան

ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունիսի 2017թվականի N 17-Ն

ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանարապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ՎԻՎ օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասը, Բամբակաշատի համայնքապետին կից հանրային խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 14-ի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 7 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Սահմանել Բամբակաշատ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.Գևորգյան Կարինե	.....	.....	.....
2.Եղիազարյան Զավեն	.....	.....	.....
3.Հարությունյան Կարեն	.....	.....	.....
4.Մկրտչյան Նորայր	.....	.....	.....
5.Սարիբեկյան Գոռ	.....	.....	.....
6.Սարիբեկյան Մարտիկ	.....	.....	.....
7.Տեր-Գեղամյան Գեղամ	.....	.....	.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի ԹԻՎ 04

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ 17-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԿԱՐԳ

ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

1. Սույն կարգով /այսուհետ՝ Կարգ/ սահմանվում է Բամբակաշատ համայնքի վարչական սահմաններում օգտվող անշարժ գույքի սեփականատիրոջ և /կամ/ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները /այսուհետ՝ պարտադիր բարեկարգում/:

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Բամբակաշատ համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են ՝ շենքերը, շինություններն և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:

4. Սույն կարգը տարածվում է Բամբակաշատ համայնքի վարչական տարածքում գտնվող՝

   1)բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

   2)առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

   3)այգիներում, հանգստի գոտիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքների այլ օբյեկտների / այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

4)ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների և գազալցակայանների / այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5)բացօթյա շուկաների և տոնավաճառների / այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա:

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1)անշարժ գույքի արտաքի մասի պատշաճ պահպանման և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը.

2)կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը:

3)անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար.

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովվում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:

7. Պարտադիր բարեկարգման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N 91 որոշման համապատասխան՝ շինարարության թույլտվություն չի պահանջվում:

8. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով և միայն համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1)շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում.

2)տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.

3)լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գունային փոփոխություններ.

4)պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.

5)բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

9. Գործող ընթացակարգերով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են Բամբակաշատի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից տրված ճարտարապետական կամ ձևավորման նախագծին համապատասխան՝ համայնքի ղեկավարի համաձայնությունը ստանալուց հետո:

Նախագիծը անվճար մշակվում և տրվում է Բամբակաշատի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի կողմից:

10. Բամբակաշատի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ անշարժ գույքի բարեկարգման և կատարվող այլ աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետներ:

11. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1)խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկները պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով.

2)մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը և անհրաժեշտ թվաքանակով աղբամանների առկայությունը.

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը.

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտ-բետոնե ծածկերը և /կամ/ սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից.

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում կամ ճամփեզրին:

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձյունից և սառույցից:

12. Բամբակաշատ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր և /կամ/ տիրապետող հանդիսացող կամ իրավաբանական անձը:

13. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն, այդ թվում արտաքին գովազդի տեղադրումը, համաձայնեցնում է Բամբակաշատի համայնքապետարանի հետ:

14. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

15. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշում է անշարժ գույքի նկատմամբ սեփկանության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

16. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1)կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցված տարածքի պարագծից մինչև 5մետր, կառույցից դուրս՝ մինչև փոփոցի երթևեկելի մասի եզրաքարը.

2)բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային ննկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցված տարածքի պարագծից մինչև 5 մետր կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.

3)առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծից մինչև 5 մետր կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.

4)ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների, գազալցակայանների, արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար հատկացված և /կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից 5-15 մետր կամ մինչև 5 մետր կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.

5)առողջապահական և կրթական օբյեկտների համար հատկացված և /կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից մինչև 10 մետր կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.

6)շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար հատկացված և /կամ/ զբաղեցված տարածքի պարագծից պարագծից 5-10 մետր կամ մինչև 5 մետր կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.

7)առանձին դեպքերի համար կարող են կիրառվել սույն կետի 1-6-րդ ենթակետերում նշված ծավալներից տարբերվող ծավալներ՝ համաձայնեցնելով դրանք Բամբակաշատի համայնքապետարանի հետ:

ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ *Ս.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*